ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ Հ.Ս.Խ.Հ. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

1933 Թ. ՀԱՅԱՄԹԵՐՄԱՆ ՈՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

38
Խ-11

ՅԵՐԵՎԱՆ—1933

06 APR 2010

38
Ա-11

ԿԱԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՐՊՈՎ ՀԱՑԱՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հացաբույսերի բերքատվությունը բարձրացնելու և ցանքերի տարածությունն ել ավելի ընդարձակելու նպատակով, կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու (վաճառելու) հաստատուն պարտավորությունները ժամանակին վորոշելու համար ԽՍՀՄ–ի Ժողկոմխորհի և Համ Կ (բ) Կ–ի Կենտկոմի 1933 թ. հունվարի 19–ի «Կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու վերաբերյալ» վորոշման հիման վրա (ԽՍՀՄ–ի Որենքների Ժողովածու, № 4, հոդվ. 25), ՀՍԽՀ Ժողկոմխորհը և ՀԿ (բ) Կ Կենտկոմը վորոշում են՝

1. Ձեղյալ համարել հացահատիկային մշակույթների մթերման գոյություն ունեցող պարտադրական (կոնտրակտացիոն) սիստեմը և կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների համար սահմանել պետությանը սահմանված պետական գներով հացահատիկ հանձնելու հաստատուն, հարկի ուժ ունեցող պարտավորություններ։

2. Հաստատել հետևյալ միջին շրջանային նորմաները, վորով կոլտնտեսությունները պետք է հացահատիկ հանձնեն պետությանը 1933 թվականի բերքից, յելնելով գարնանացանի հացահատիկային մշակույթների համար սահմանված պլանի յուրաքանչյուր հեկտարից և փաստորեն ցանված աշնանացան մշակույթների յուրաքանչյուր հեկտարից (կիլոգրամներով)։

11 SEP 2013

54864

	ՄՏԿ-ների սպառարկած կոլանտեսությունները	ՄՏԿ-ների կողմից չսպասարկվող կոլանտեսությունները
Վաղ-պատ	50	75
Վեղի	40	60
Ղամարլու	40	60
Ղուրդուղուլի	40	60
Ախտա	45	70
Լենինական	45	70
Ստեփանավ.	30	45
Աբարան	—	75
Աղբաբա	—	40
Ալլահվերդի	—	35
Արթիկ	—	75
Աշտարակ	—	70
Բաստարդեչ.	—	70
Գորիս	—	65
Դիլիջան	—	40
Իջևան	—	35
Ղարաքիլիսա	—	40
Ղափան	—	35
Քեշիշքենդ	—	55
Կոտայք	—	75
Մարտունի	—	50
Ն. Բայազետ	—	80
Փաշալու	—	60
Սիսիան	—	60
Թալին	—	55
Շամշադին	—	45

3. Հանձնարարել ՀՍԽՀ Ժողկոմխորհին կից Մթերման կոմիտեի Լիազորին՝ հատուկ հրահանգով սահմանել գարի և այլ հացահատիկներ հանձնելու կարգն ու նորմաները:

4. Ցորեն հանձնելու համար սահմանվում են սույն վորոշման 2-րդ կետում մատնանշված նորմաներին հավասար նորմաներ:

5. Քեշիշքենդի և Աշտարակի շրջանների համար սահմանել հանձնելու յերկու նորմա:

Աշտարակի առաջին յենթաշրջան՝ 50, յերկրորդ յենթաշրջան՝ 80. Քեշիշքենդի առաջին յենթաշրջան՝ 40, յերկրորդ յենթաշրջան՝ 70:

Մանրություն.— Հանձնելու վերոհիշյալ յերկու նորմաները պետք է կիրառվեն այնպիսի հաշվով, վոր ամբողջ շրջանում միջին հաշվով ստացվի սույն վորոշման 2-րդ կետում մատնանշված նորման:

6. Վորոշման 2, 3, 4, 5 կետերում նախատեսված շրջանային նորմանները պարտադիր են տվյալ շրջանի բոլոր կոլանտեսությունների համար և չեն կարող փոփոխության յենթարկվել:

7. Հացահատիկի այն քանակը, վորը պետք է հանձնի յուրաքանչյուր կոլանտեսություն պետությանը, վորոշում են շրջգործկոմները՝ ճիշտ սույն վորոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածների հիման վրա:

8. Սահմանել հետևյալ որացուցային ժամկետները, վորոնց համաձայն կոլանտեսությունները պետք է կատարեն պետությանը հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները, հաշվելով սույն վորոշման 2-րդ կետում սահմանված հեկտարային նորմաների տոկոսներով:

	հուլիս	օգոստ.	սեպտ.	հոկտ.
Վաղ-պատ	50	50	—	—
Վեղի	40	60	—	—
Ղամարլու	50	50	—	—
Ղուրդուղուլի	50	50	—	—
Ախտա	—	30	50	20
Լենինական	—	30	60	10
Ստեփանավ.	—	40	50	10
Աբարան	—	10	40	50
Աղբաբա	—	20	50	30
Ալլահվերդի	20	60	20	—
Արթիկ	—	25	60	15
Աշտարակ	30	50	20	—
Բաստարդեչար	—	10	40	50
Գորիս	—	40	50	10
Դիլիջան	10	40	40	10
Իջևան	30	70	—	—
Ղարաքիլիսա	—	40	50	10
Ղափան	30	70	—	—
Քեշիշքենդ	10	40	50	—
Կոտայք	20	50	30	—
Մարտունի	—	25	50	25
Ն. Բայազետ	—	25	50	25
Փաշալու	—	23	50	20
Սիսիան	—	20	50	30
Թալին	—	25	50	25
Շամշադին	20	50	30	—

9. Սույն որոշմամբ սահմանված կարգը, որով փոխվում է կոլտնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու չափը, չի տարածվում անհատական տնտեսությունների վրա: Վերջիններիս համար սահմանվում է հետևյալ կարգը.—

Գյուղխորհուրդները յուրաքանչյուր անհատական տնտեսության համար որոշում են պետությանը հացահատիկ հանձնելու հաստատուն պարտավորություններ, ելնելով փաստորեն ցանված աշնանացան հացահատիկային մշակույթների տարածությունից և գարնանացան հացահատիկային մշակույթների ցանքի հաստատուն պլանից, որը սահմանել են գյուղխորհուրդները յուրաքանչյուր անհատական տնտեսության համար, ինչպես և ելնելով այն հանգամանքից, որ անհատական տնտեսությունները յուրաքանչյուր հեկտարից հանձնեն 5—10 տոկոս ավելի, քան տվյալ շրջանի կոլտնտեսությունների համար սահմանված նորման:

10. Անհատական տնտեսությունների կողմից հացահատիկ հանձնելու համար սահմանված տարեկան պլանների կատարման վերջին ժամկետը սահմանել հոկտեմբերի 1-ը, ընդ որում հանձնելու ամսական պլանները սահմանում են շրջգործկոմները՝ համապատասխան կոլտնտեսությունների համար ընդունված աղյուսակի:

11. Պարտավորեցնել շրջանային գործկոմներին՝ նրանց նախագահների անձնական պատասխանատվությամբ, ս. թ. ապրիլի 1-ից ոչ ուշ, հանձնել յուրաքանչյուր կոլտնտեսությանը հացահատիկ հանձնելու նրա պարտավորությունները՝ ըստ մշակույթների, մատնացույց անելով այդ պարտավորությունները կատարելու ժամկետները:

Մինչև նույն ժամկետը յուրաքանչյուր անհատական տնտեսությանը հանձնել պետությանը հացահատիկ հանձնելու նրա պարտավորությունները, մատնացույց անելով հանձնելու չափն՝ ըստ առանձին մշակույթների, ինչպես և հացահատիկ հանձնելու ժամկետները:

12. Պետությանը հացահատիկ հանձնելիս, կոլտնտեսություններին և անհատական տնտեսություններին թույլատրվում է մի մշակույթը փոխարինել մի այլ մշակույթով (վարսակի փոխարեն գարի և ընդհակառակը, գարու փոխարեն ցորեն կամ կարմրահատ):

Չի թույլատրվում ցորենը փոխարինել որևէ այլ մշակույթով:

13. Կոլտնտեսությունները և անհատական տնտեսությունները պարտավոր են իրենցից հասանելիք քանակությամբ հացահատիկը բերել և հանձնել Զագոտզեռնոյի մթերակայաններին, իսկ մթերող կազմակերպությունները պարտավոր են պահպանել հացահատիկ հանձնողների հետ հաշիվ տեսնելու դյուրություն ունեցող պրակտիկան, հաշվի առնելով փոխադրավայրի հեռավորությունը:

14. Ի հաշիվ սույն որոշմամբ կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու վերաբերյալ սահմանված պարտավորությունների կատարման, ընդունվում է միմիայն լավորակ հացահատիկ:

Մղլած և ծլած հացահատիկը չի մտցվում կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների պարտականությունների կատարման հաշվի մեջ: Այլ բույսերի սերմերով խառնած և խոնավ հացահատիկը մտցվում է պարտավորությունների կատարման հաշվի մեջ, համապատասխան զեղչ անելով կեղտոտության և խոնավության համար:

Պարտավորեցնել մթերակայանների վարիչներին՝ դատական պատասխանատվության կանչել այն անձանց, որոնք փորձ կանեն հանձնելու պետությանը վատորակ կամ փչացած հացահատիկ:

15. Գյուղական ուսուցիչներին, ագրոնոմներին և բուժաշխատողներին պետական հաստատուն գներով հացահատիկ մատակարարելու համար առաջարկել շրջգործկոմներին՝ կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու վերաբերյալ սույն որոշմամբ սահմանված պարտավորությունների վրա սահմանել պարտադիր հավելումներ հանձնվելիք հացահատիկի քանակի 2 տոկոսի չափով:

Ի հաշիվ այդ հավելումների հացահատիկը կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից հանձնվում է պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման հետ միաժամանակ և գործադրվում է շրջգործկոմների կողմից Ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեի հատուկ հրահանգի հիման վրա:

16. Պետությանը հացահատիկ հանձնելու համար սույն որոշմամբ սահմանված պարտավորությունների կատարումը հանդիսանում է յուրաքանչյուր կոլտնտեսության և անհատական տնտեսության առաջնահերթ խնդիրը և պետք է կատարվի առաջին կալից:

Հացի կոլտնտեսական առևտուրը թույլատրվելու յե հացամթերման սույն վորոշման հիման վրա սահմանված պլանն ամբողջ հանրապետության մեջ կատարվելուց և՝ հացամթերումների պլանի կատարումից հետո՝ սերմֆոնդերը լրիվ հավաքելուց հետո:

17. Այն կոլտնտեսությունները, վորոնք չեն կատարի հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները սույն վորոշմամբ սահմանված որացուցային ժամկետներում, գյուղխորհուրդների միջոցով յենթարկվում են փողային տուգանքի՝ պարտավորության չկատարված մասի չուկայական արժեքի չափով և, բացի դրանից, այդ կոլտնտեսություններին պահանջ է ներկայացվում անվիճելի կարգով ժամկետից առաջ կատարելու իրենց ամբողջ տարվա պարտավորությունները:

Այն անհատական տնտեսությունները, վորոնք չեն կատարի պետությանը հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները, սույն վորոշմամբ սահմանված ժամկետներին, դատական պատասխանատվության են կանչվում ՀՍԽՀ Քրեական Որենսդրքի 86-րդ հոդվածի համաձայն:

18. Իշխանության տեղական որգաններին և մթերող որգաններին անպայման արգելվում է թույլ տալ հանդիպական պլաններ և կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների վրա դնել հացահատիկ հանձնելու այնպիսի պարտավորություններ, վորոնք գերազանցեն սույն որենքով սահմանված հեկտարային նորմաները: Պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունները կատարելուց հետո մնացած ամբողջ հացահատիկը մնում է կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների իրենց լիակատար տնօրինությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԽԱՆԶՅԱՆ

25 մարտի 1933 թ.

ՎՈՐՈՇՈՒՄ

Հ. Ս. Խ՝ Հ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ

1933 թ. մարտի 26-ի

Կոլտնտեսականներին և մենատնտեսների կողմից պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու վերաբերյալ հրահանգի հաստատումը

1. Հաստատել Մթերման Կոմիտեի Հայաստանի լիազորի կողմից մշակված հրահանգը 1933 թ. «Կոլտնտեսությունների և մենատնտեսների կողմից պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու» առթիվ:

(Կցվում է).

Ժողկոմխորհի նախագահ՝ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝ Ա. ԹՈՔՄԱՋՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ

«Կոլտնտեսությունների և մենատնտեսների կողմից պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու վերաբերյալ»

1. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության համար, Պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության չափը շրջաններում, հաստատվում է շրջգործկոմի նախագահությունը «Մթերման» Կոմիտեի շրջանային լիազորի առաջարկությամբ:

2. Պարտավորության չափը «Մթերումների» Կոմիտեի շրջլիազորը հաշվում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից հրապարակված նորմաներով առանձին՝ այն կոլտնտեսությունների համար, վորոնք սպասարկվում են ՄՏԿ-ի կողմից և այն կոլտնտեսությունների, վորոնք չեն սպասարկվում:

3. ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված նորմաներով պարտավորությունների չափը հաշվվում է այն կոլտնտեսությունների նկատմամբ միայն, որոնք սպասարկման վերաբերյալ (վարի, ցանքի, հունձի, կարման և այլն) պայմանագիր են կնքել ՄՏԿ-ի հետ:

ՄՏԿ-ի և կոլտնտեսության միջև չեղած պայմանագրերը չեղյալ հայտարարվելու դեպքում «Մթերումների Կոմիտեի» շրջանային լիազորը պարտավոր է տվյալ կոլտնտեսության համար պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափը վերահաշվել ՄՏԿ-ով չսպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված նորմաների:

4. Յուրաքանչյուր կոլտնտեսության համար պարտավորության չափը պետք է հաշվել ըստ բոլոր հացահատիկային մշակույթների՝ ընդհանուր առմամբ և առանձնապես՝ ըստ ցորենի և գարու:

5. Յուրաքանչյուր կոլտնտեսության պարտավորության չափը պետք է վորոշել, յելնելով 1932 թ. աշնանը կատարված վաստակի հացահատիկային մշակույթների կատարված ցանքից շրջգործկոմի կողմից: Կոլտնտեսության համար 1933 թ. գարնան վերաբերմամբ սահմանված հացահատիկային մշակույթների (ցորենի, գարու, վարսակի, կարմրացորենի) ցանքերի պլանից:

Մանրություն.— Կերախոտերի, բրնձի, բանջարաբոստանային, տեխնիկական, ձեթային և այլ կուլտուրաները պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության չափը վորոշելիս հաշվի չի առնվում:

6. Կոլտնտեսության կողմից 1932 թ. աշնանը վաստակած կատարված հացահատիկային մշակույթների տարածության և շրջգործկոմի կողմից 1933 թ. գարնանացանի համար սահմանված հացահատիկային մշակույթների ցանքի պլանը, ինչպես նաև ՀՍՍՀ Ժողկոմխորհի վորոշմամբ հրապարակված հացահատիկի մեկ հեկտարից հանձնելիք շրջանային նորմայից յելնելով Մթերումների Կոմիտեի շրջանային լիազորը վոչ ուշ, քան մինչև ապրիլի 1-ը հաշվում է յուրաքանչյուր կոլտնտեսության համար հացահատիկ հանձնելու պարտավորության չափը, ընդհանուր առմամբ բոլոր հացահատիկային կուլտուրաների և առանձին ցորենի ու գարու:

Մանրություն.— 1. Ցորենի հանձնման չափը վորոշվում է յելնելով ցորենի ցանքի ամբողջ տարածությունից և ԺԿԿ-ի կողմից սահմանված նորմաներից, վորպիսին վոչ մի դեպքում պակասեցման յենթակա չէ:

2. Գարու հանձնման չափը վորոշվում է՝ յելնելով նույնպես այդ նորմայից, միայն հաշվելով մնացած բոլոր հացահատիկային ցանքերի տարածությունը (գարի, վարսակ, կարմրացորեն, յեգիպտացորեն, կորեկ, հաճար և այլն):

7. Կոլտնտեսության համար սահմանված հացահատիկ հանձնելու առաջադրանքի չափը, միաժամանակ հայտնվում է այն դյուղխորհրդին, վորի տերիտորիայի վրա գտնվում է տվյալ կոլտնտեսությունը և Զագոտղերնոյի այն մթերման կայանին, վորին ամրացվում է այդ կոլտնտեսությունը՝ հացահատիկ հանձնելու համար:

2. ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Մենատնտեսների՝ պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափը վորոշելու համար շրջգործկոմի նախագահությունը սահմանում է այդ տնտեսությունների համար ըստ յուրաքանչյուր դյուղխորհրդի հացահատիկի հանձնման նորման մեկ հեկտարից, այն հաշվով, վոր դյուղխորհրդի այդ նորման 5—10 տոկ. ավելի բարձր լինի, քան տվյալ շրջանի ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլխոզների նորման է:

9. Մենատնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափը վորոշելու համար դյուղխորհուրդները վոչ ուշ, քան մինչև ապրիլի 1-ը, կազմում են իրենց գործունեության սահմաններում գտնվող մենատնտեսությունների ցուցակը, ցույց տալով՝

ա) Մենատնտեսության գլխավոր անձի ազգանունն, անունը և հայրանունը:

բ) Յուրաքանչյուր մենատնտեսության կողմից 1932 թ. աշնանը կատարված հացահատիկային մշակույթի ցանքի տարածությունն՝ ըստ կուլտուրաների:

գ) Գյուղխորհրդի կողմից յուրաքանչյուր մենատնտեսության համար վորոշված հացահատիկային մշակույթների 1933 թվի գարնանը կատարելիք ցանքի պլանն՝ ըստ կուլտուրաների:

Պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնող մենատնտեսությունների ցուցակի մեջ մտցվում են՝ բոլոր այն տնտեսությունները, վորոնք աշնան ցանք ունեն և վորոնց հացահա-

տիկային գարնան մշակույթների ցանքի պլան և առաջադրված, ինչպես և այն տնտեսությունները, որոնք միմիայն աշնան ցանք ունեն և որոնց հացահատիկային գարնան մշակույթների ցանքի պլան չի տրված կամ ընդհակառակն աշնան ցանք չունեն, բայց հացահատիկային գարնան մշակույթների ցանքի պլան են ստացել:

10. Կուլակային ունևոր տնտեսությունների համար կազմվում է առանձին ցուցակ:

Այդ տնտեսությունների նկատմամբ մեկ հեկտարից հանձնման նորման վորոշվում է մեկ ու կեսի չափով, հանձնման այն նորմայի համեմատությամբ, վորը սահմանված է տվյալ դյուղխորհրդի սահմաններում գտնվող մենատնտեսությունների համար:

11. Դյուղխորհրդների կողմից կազմված մենատնտեսությունների ցուցակները վոչ ուշ, քան մինչև 1933 թ. ապրիլի 5-ը ներկայացվում են շրջգործկոմի քննությանը և, շրջգործկոմի նախագահության կողմից հաստատվելուց հետո, ցուցակների մի որինակը ներկայացվում է Մթերումների Կոմիտեի շրջանային լիազորին, իսկ մյուս որինակը՝ տվյալ դյուղխորհրդի նախագահին:

12. Դյուղխորհրդի նախագահությունը, ցուցակները շրջգործկոմի կողմից հաստատվելուց հետո յերկու որվա ընթացքում վորոշում է, թե վորքա՞ն պետք է յուրաքանչյուր մենատնտեսություն պետությանը հացահատիկ հանձնի, ղեկավարվելով՝

ա) շրջգործկոմի նախագահության կողմից հաստատված ցուցակներով.

բ) յուրաքանչյուր առանձին մենատնտեսության ցանքի այն տարածությամբ, վորը մատնանշված է ցուցակի մեջ (աշնան ցանքի փաստացի տարածության և վորոշված հացահատիկային գարնան մշակույթների ցանքի պլանը).

գ) Շրջգործկոմի կողմից տվյալ դյուղխորհրդի մենատնտեսների համար վորոշված մեկ հեկտարից հանձնելիք նորմայով:

Մենատնտեսությունների՝ պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափը դյուղխորհուրդը վորոշում է ինչպես ընդհանուր առմամբ, բոլոր հացահատիկային կուլտուրաների, նույնպես և առանձին՝ ցորենի և գարու համար:

Ծանոթություն. — Ցորենի և գարու չափը վորոշվիս ղեկավարվել սույն հրահանգի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ծանոթությամբ:

13. Դյուղխորհրդի նախագահը դիսցիպլինար և դատական պատասխանատվություն է կրում մենատնտեսությունների ցուցակում յեղած տվյալների ճշտության համար (առանձին մենատնտեսություններ ցուցակի մեջ չմտցնելը, ցուցակի մեջ մենատնտեսությունների ցանքերի տարածության մասին սխալ տեղեկություններ ցույց տալը և այլն):

3. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

14. Ցուրաքանչյուր Կոլտնտեսության և մենատնտեսությանը հանձնվում է դրավոր, պատշաճ ստորագրություններով (հոդ. 16 և 20) և կնքված պարտավորագիր՝ պետությանը հացահատիկ հանձնելու չափի մասին:

15. Պարտավորագրերը պետք է խնամքով լրացնել, առանց վորևե ջնջումների և բացթողումների: Պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափն անպայման պետք է գրել տառերով:

16. Կոլտնտեսությանը հանձնվող պարտավորագրերը ստորագրում են—Մթերումների կոմիտեի շրջլիազորը և շրջգործկոմի նախագահը: Կոլտնտեսությանը հանձնվող պարտավորագրերի մեջ պետք է նշված լինի՝

ա) կոլտնտեսության լրիվ անունը.

բ) այն դյուղխորհրդի անունը, վորի տերիտորիայում գրանցվում է տվյալ կոլտնտեսությունը.

գ) տվյալ կոլտնտեսության համար վորոշված հացահատիկի պարտավորության չափն, ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների, նույնպես և առանձին ցորենի և գարու.

դ) յուրաքանչյուր կոլտնտեսության համար ըստ ամիսների և մշակույթների վորոշված հացահատիկի հանձնման չափը, յուրաքանչյուր հանձնման տարեկան պլանի կատարման այն ժամանակներից, վորոնք վորոշված են ՀՍՍՀ Ժողկոմխորհի և Կենտկոմի կողմից.

ե) հանձնման կետը (բազա, կայան), վորտեղ պետք է հանձնվի հացահատիկը: Լրացրած պարտավորագիրը հանձնվում է տվյալ կոլտնտեսության նախագահին կամ նրա տեղակալին:

17. Կոլտնտեսության նախագահը կամ նրա տեղակալը պարտավորագիրը ստանալու առթիվ ստորագրում է այն հաշվառման վկայականի վրա, վորը մնում է Մթերումների Կոմիտեի շրջ-

լեզվորի մոտ—ցույց տալով պարտավորագրի ստացման ժամկետը։

18. Յուրաքանչյուր մենատնտեսության պարտավորագիրը գյուղխորհուրդը լրացնում է այն ցուցակների համեմատ, որոնք հաստատված են շրջգործկոմի նախագահության կողմից։

19. Գյուղխորհուրդը պարտավոր է պարտավորագրի մեջ գրել.—

ա) մենատնտեսության գլխավոր անձի ազգանունը, անունը և հայրանունը.

բ) այն բնակավայրը (գյուղ), որտեղ տնտեսությունն է գտնվում.

գ) հացի հանձման չափը; որը որոշված է այդ տնտեսության համար ընդհանուր առմամբ՝ հացահատիկային մշակույթների համար և առանձին՝ ցորենի ու գարու.

դ) հանձման չափն ըստ ամիսների, ընդհանուր առմամբ հացահատիկային մշակույթների և առանձին՝ ցորենի ու գարու։

ե) պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության կատարման վերջնական ժամկետը.

զ) «Զադոտզերնոյի» հանձնման այն կետը (բազա, կայան), որտեղ պետք է հացահատիկն ընդունվի։

20. Տվյալ գյուղխորհրդի սահմանում գտնվող մենատնտեսությունների պարտավորագրերը գյուղխորհրդի կողմից լրացնելուց հետո, գյուղխորհրդի նախագահը անձամբ բոլոր լրացրած պարտավրագրերը ներկայացնում է Մթերումների Կոմիտեի շրջկոմներին, որը գյուղխորհրդի նախագահի հետ միասին ստուգում է թե արդյո՞ք համապատասխանում է նախագահության հաստատած ցուցակներին։

Ստուգված պարտավորագրերը ստորագրվում են Մթերումների Կոմիտեի շրջկոմի և գյուղխորհրդի նախագահի կողմից։

21. Մթերումների Կոմիտեի շրջանային լիազորը հարմնում է «Զադոտզերնոյի» մթերման կետին՝ նրան ամրացված գյուղխորհրդների ցուցակները մենատնտեսությունների հացահատիկ հանձնելու պարտավորության ընդհանուր չափը, որը որոշված է տվյալ գյուղխորհրդի սահմանում գտնվող բոլոր մենատնտեսությունների համար։

22. Մթերումների Կոմիտեի շրջկոմի կողմից պարտավորագրերը ստորագրելուց հետո վոչ ուշ, քան յերեք որվա ընթացքում, գյուղխորհրդի նախագահն անձամբ հանձնում է պարտավորագիրը մենատնտեսության գլխավոր անձին կամ ընտանիքի այն չափահաս անդամին, որը տվյալ պահին փոխարինում է նրան, վերցնելով նրա ստորագրությունը հաշվառման վկայականի վրա և նշելով հանձնման ժամկետը։

23. Հաշվառման վկայականները, հացահատիկ հանձնելու մասին՝ պարտավորագրերը ստացողների ստորագրությունների հետ միասին, գյուղխորհրդի նախագահը վերադարձնում է Մթերումների Կոմիտեի շրջկոմին։

24. Այն դեպքում, յերբ մենատնտեսության գլխավոր անձը կամ նրա փոխարինողը հրաժարվում է ստանալ պարտավորագիրը և ստորագրել հաշվառման վկայականի վրա, գյուղխորհրդի նախագահն արձանագրություն է կազմում և պարտավորագիրը համարվում է հանձնված։

25. Մենատնտեսներին գյուղխորհրդի կողմից հացահատիկ հանձնելու պարտավորագիրը տալուց 20 որվա ընթացքում Մթերումների Կոմիտեի շրջկոմները պարտավոր է ստուգել բոլոր գյուղխորհուրդներում թե արդյո՞ք ամբողջապես հանձնված են պարտավորագրերի յուրաքանչյուր մենատնտեսությանը։

26. Գյուղխորհրդի նախագահը պատասխանատու է պարտավորագրերը ճիշտ լրացնելու, պարտավորագրի մեջ նշված հացի հանձնման չափը շրջգործկոմի նախագահության կողմից հաստատված ցուցակում նշված մենատնտեսությանը հանձնելու համար։

4. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

27. Ի հաշիվ կոլտնտեսությունների և մենատնտեսությունների պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության կատարման, ընդունվում են հետևյալ մշակույթները՝ ցորենը, գարին, վարսակը և կարմրացորենը։

Կոլտնտեսություններին և մենատնտեսություններին իրավունք է տրվում մեկ մշակույթը փոխարինել մյուսով, սակայն.—

ա) ցորենը չի կարելի փոխարինել այլ մշակույթով.

բ) գարին կարող է փոխարինվել վարսակով, կարմրացորենով (հաճար) և ցորենով։

28. Պետությանը հանձնվելիք ամբողջ ցորենը կոլտնտեսությունները և մենատնտեսությունները պետք է փոխադրեն «Զադոտզերնոյի» մթերման կետերը։

Վորպես կանոն, պետությանը պարտադիր կերպով հանձնվող հացի ընդունումը կատարվում է միմիայն «Զաղոտղերնոյի» պահեստներում:

Այն դեպքում, երբ վորպես բացառություն, թույլ է տրվում ժամանակավոր (ոժանդակ) հեռավոր կետեր բացելու, այդ նույն կետերին հացահատիկ հանձնող կոլտնտեսություններից և մենատնտեսություններից պարտավորություն է վերցվում այն մասին, վոր նրանք վորոշ ժամկետում և իրենց փոխադրական միջոցներով պետք է ժամանակավոր մթերման կայաններին հանձնված ցորենը փոխադրեն «Զաղոտղերնո»-յի պահեստները, ստանալով դրա համար նախատեսված դումարը: Կայարանից կամ նավահանգստից վոչ ավելի քան 30 կիլոմետր հեռավորության վրա գտնվող ժամանակավոր ոժանդակ կետերում (հեռավոր կետերում) — յեղած հացահատիկի գները պետք է հիմնական մերձակայարանային կամ մերձնավահանգստային կետերի մթերման գներից ավելի ցածր լինեն այն դումարով, վորը հավասար է հացի նավահանգիստները կամ կայարանները սայլով փոխադրելու փաստական ծախսերին, ներառյալ և բարձման ու պարպման արժեքը:

Կայարանից կամ նավահանգստից վոչ ավելի, քան 30 կիլոմետր հեռավորության վրա գտնվող ժամանակավոր ոժանդակ կետերի համար թույլատրվում է մթերման գներ սահմանել, դուրս գալով յերկաթուղու կայարան կամ նավահանգիստ սայլով փոխադրելու փաստական ծախսերի մի մասը միայն:

Այդ կետերի գները չպետք է նախընթաց տարում վճարված գներից ավելի պակաս լինեն:

29· Կոլտնտեսության և մենատնտեսության համար վորոշված պարտավորությամբ հանձնվելիք ցորենը պետք է փոխադրվի «Զաղոտղերնոյի» այն մթերման կայանը, վորը նշված է տվյալ կոլտնտեսության կամ մենատնտեսության հանձնված պարտավորագրերի մեջ:

30 Կոլտնտեսությունների և մենատնտեսների կողմից պարտավորության հաշվին հանձնվող ցորենը, ընդունվում է գոյություն ունեցող պետական գներով հետևյալ բաղխային կոնդիցիայով (տես էջ 17):

31· Պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության հաշվին հացահատիկ ընդունելիս ամբողջովին հաշվի չի առնվում միմիայն այն հացահատիկը, վորն իր

վորակով համապատասխանում է հիշված Բաղխային Կոնդիցիաներին կամ իր աղբային խառնուրդով և խոնավությամբ չեղվում է այդ կոնդիցիաներից վոչ ավելի, քան յերկու տոկոսով:

Պետության հանձնվելիք հացահատիկների բաղխային կոնդիցիաները 1933|34 թվ.

№ քան.	Գուլտուրաների անունները	Հացի գրամներով	Խոնավություն	Աղբերի տոկոսներով	Հեղեղատ. տոկոսներով
1	Ցորեն	715	Չոր է	1 % ներ.	1 % ներ.
2	Ցորեն ոչնան . . .	755	»	1 » »	3 » »
3	Ցորեն գարնան փափուկ .	755	»	1 » »	2 » »
4	Ցորեն գարնան կոշտ .	760	»	1 » »	2 » »
5	Վարսակ	460	»	1 » »	2 » »
6	Գարի	610	»	2 » »	2 » »
7	Հաճար	—	»	2 » »	2 » »

32· Այն դեպքում, երբ հանձնվող հացահատիկի աղբային խառնուրդի և խոնավության տոկոսն ավելի յե, քան այն տոկոսը, վոր նախատեսված է սահմանափակիչ կոնդիցիաներով (2 տոկոս), դուրս է հանվում այդ ամբողջ պարտքային աղբային խառնուրդի և խոնավության տոկոսների ավելցուկը և պլանի դիմաց չի հաշվվում:

Ցորեն ընդունելու ժամանակ դեղչ անելիս, աղբային խառնուրդը և խոնավությունը հաշվի յե առնվում առանձին:

Այդ դեղչը վորոշվում է ըստ յուրաքանչյուր տվյալ պարտքային վորակի փաստական ցուցանիշների, վորոնք վորոշվում են հացահատիկի վորակի վերլուծությամբ:

33· Պարտավորագրերի հաշվին ընդունման յենթակա չեն այն հացահատիկը, վորը 10 տոկոս ավելի աղբոտություն ունի, հացահատիկը, վորը յերկու տոկոսից ավելի վնասակար խառնուրդ ունի, հացահատիկը, վորը 15 տոկոսից ավելի ծլածություն ունի և կամ այրված ու նեխված է: Մթերման կայանների վարիչները պարտավոր են դատական պատասխանատվության կանչել նրանց, ովքեր փորձեր կանեն հանձնելու պետությանը նման վորակի հացահատիկը:

Նման վատորակ հացահատիկ հանձնելու յուրաքանչյուր

դեպքում Մթերման կայանի վարիչը պարտավոր է արձանագրություն կազմել, ցույց տալով այն կոլտնտեսության անունը կամ մենատնտեսի ազգանունը, վորին պատկանում է հացահատիկի տվյալ պարտքան և այն անձի, վորը նման հացահատիկ է բերել։ Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է դատական մարմիններին՝ հացահատիկը փչացնողներին հայտարերելու և նրանց դատական պատասխանատվության կանչելու համար։

34. Կոլտնտեսությունների և մենատնտեսությունների կողմից, ի հաշիվ պարտավորության, Մթերման կայանը հանձնված հացահատիկի համար, վերջինը հաշվարկ է կատարում սահմանված պետական դներով, կիրառելով զեղչ՝ հացահատիկը ցածր վորակ ունենալու դեպքում։

35. Հացահատիկի վորակական դնահատումը սահմանված է ՀՍԽՀ Ժողկոմխորհին կից, Մթերման Կոմիտեի կողմից։

36. Կոլտնտեսությունների և մենատնտեսությունների կողմից հանձնվող հացահատիկի վորակի մեջ յեղած բոլոր պակասությունների, այլ և Մթերման կետերից հեռու գտնվելու համար արվող ընդունումը զեղչը չպիտի գերազանցի մեկ ցենտներից (մերձ կայանների դների համեմատ) ցորենի նկատմամբ 3 ռուբլի։

Վարսակի, հաճարի և գարու նկատմամբ 2 ռ. 50 կոպ.։

37. Կոլտնտեսությունների և մենատնտեսությունների կողմից պետությանը պարտադիր կերպով հանձնվող հացահատիկի համար «Զագոտղերնոյի» կայանը հաշվարկ է կատարում հետևյալ կարգով՝

ա) այն կետերում, վորտեղ կան պետական բանկի գրասարքիչներ կամ, վորտեղ պետբանկի բաժանմունքը Մթերման կայաններից վոչ ավելի, քան 20 կիլոմետր հեռավորության վրա և գտնվում, հաշվարկը կոլտնտեսությունների հետ կատարվում է կանխիկ դրամով, կամ կոլտնտեսության ցանկությամբ՝ վերջինի պետբանկում ունեցած համապատասխան ընթացիկ հաշվին փոխանցելու միջոցով։

բ) այն կետերում, վորտեղ պետբանկի գրասարքիչներ չկան, կամ վորտեղ Պետբանկի բաժանմունքը 20 կիլոմետրից ավելի հեռավորության վրա է գտնվում, հաշվարկը բացառապես կանխիկ դրամով է կատարվում։

գ) հաշվարկը մենատնտեսությունների հետ կատարվում է կանխիկ դրամով։

38. Կոլտնտեսությունների և մենատնտեսների անցյալ տարիների ստացած սերմ. և պարենավարկի վերադարձումը, այլ և կոլտնտեսությունների կողմից ՄՏԿ-ի կատարած աշխատանքի վարձատրության դիմաց տրվող հացահատիկը չի հաշվվում է հաշիվ պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության կատարման, այլ հաշվի է առնում վորպես հատուկ սահմանված պլանների կատարում (սերմ և պարենավարկի մարումն ՄՏԿ աշխատանքի բնակավարձի կատարում և այլն)։

39. Պետ. սերմ. Ֆոնդի հաշվին կոլխոզների և մենատնտեսների կողմից պայմանագրերով հանձնվող հացահատիկը հաշվվում է ի հաշիվ պարտադիր կերպով հացահատիկի հանձնման պլանի կատարման։

Այդ հացահատիկը ընդունվում է «Զագոտղերնո»-յի կողմից, կամ վերջինիս հանձնարարությամբ, «Սոյուզսեմենովոդ»-ի այն կայանները, վորոնց նկատմամբ հատուկ համաձայնություն է կնքված «Զագոտղերնո»-յի և «Սոյուզսեմենովոդ»-ի միջև։

Ընդունված տեսակավոր հացահատիկը «Զագոտղերնոն» պարտավոր է պահելու առանձին՝ տալով առանձին հաշվառում։

40. Պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության հաշվին կոլտնտեսությունների և մենատնտեսությունների կողմից տեսակավոր այնպիսի հացահատիկ հանձնելու դեպքում, վորի տեսակավոր մաքրությունը հատատվում է Հողժողկոմատի որդանների վկայականներով կամ ուրիշ փաստաթղթերով, տոմարական դներից դուրս վճարվում են հետևյալ հավելումները՝

ա) դանան և աշնան ցորենի նկատմամբ 30 կոպ. ցենտներից.

բ) գարու, վարսակի և կամրացորենի նկատմամբ 20 կոպ. ցենտներից։

Նշված հավելումները հացահատիկ հանձնողներին տրվում են այն դեպքում, յեթե տեսակավոր հացահատիկն ունի վոչ պակաս, քան 95 տոկ. տեսակավոր մաքրության կամ յեթե հացահատիկն ըստ իր տիպիկության յերկրորդ կատեգորիայի է պատկանում։

Այն տեսակավոր հացահատիկը, վորի համար հավելում է տրվում, չպետք է ծլած, մղված, նեխած լինի և պետք է բաղկացած կոնդիցիաներով նախատեսվածից ավելի խառնուրդ և խոնավություն չունենա։

5. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

41. Յուրաքանչյուր կոլտնտեսության և մենատնտեսի՝ պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորագրի հետ միասին, որվում է որենքով սահմանված լրացուցիչ պարտավորություն (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ վորոշման 15-րդ հոդ.), գյուղական ուսուցիչներին, գյուղատնտեսներին և բուժ. աշխատողներին մատակարարելու համար:

Այդ պարտավորությամբ հանձվելիք հացահատիկի քանակը պետք է լինի վոչ ավել, քան յերկու տոկոս հիմնական պարտավորագրի համեմատությամբ:

42. Լրացուցիչ այդ պարտավորությունը պետք է կատարել ցորենով:

Նույն ժամկետներում, ինչ ժամկետներում վոր կատարվում է պետությանը հացահատիկ հանձնելու հիմնական պարտավորությունը:

43. Ի հաշիվ այդ հավելումների կատարման՝ հանձնվող հացահատիկն ընդունվում է նույն պայմաններով, ինչ պայմաններով ընդունվում է ցորենը հիմնական պարտավորություններով (կոնդիցիան, գների, հանձնման կայանների պահպանումը և այլն):

44. Մթերման կայաններն ուսուցիչներին, գյուղատնտեսներին և բուժաշխատողներին հացահատիկ մատակարարելու պարտավորությունը կատարողներին տալիս են հատուկ անդորրագրեր, իսկ № 6 ձևվի ամփոփումների մեջ այդ պարտավորությամբ ստացված ցորենը հաշվի չի առնվում հատուկ սունյակում:

6. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

45. Հիմնվելով կոլտնտեսությունների հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման ամսական տուգումների վրա, մթերումների կոմիտեի շրջլիազորը կարգադրում է գյուղխորհուրդներին, վորպեսզի նրանք զանձեն դրամով իրենց պարտավորությունները՝ ժամկետին չկատարած կոլտնտեսություններից, պարտավորության տվյալ ժամկետում չկատարված մասի շուկայական արժեքի չափով, ցույց տալով յուրաքանչյուր կոլտնտեսությունից պահանջվող գումարը և բացի այդ, անվիճելի

կարգով, մինչև ժամկետը լրանալը, գանձելու երանցից հացահատիկով՝ տարեկան ամբողջ պարտավորության չկատարված մասը:

46. Մենատնտեսների պարտավորությունների կատարման հնգօրյա ստուգման հիման վրա մթերումների կոմիտեի շրջանային լիազորը ներկայացնում է շրջգործկոմի նախագահությանը այն մենատնտեսների ցուցակը, վորոնք ժամանակին չեն կատարել իրենց պարտավորությունները՝ նրանց ՀՍԽՀ Քր. Որենսգրքի 86-րդ հոդվածով քրեական պատասխանատվության յենթարկելու համար. քրեական պատասխանատվության յենթարկվող մենատնտեսությունների ցուցակը հաստատվում է շրջգործկոմի նախագահության կողմից:

47. Մթերումների կոմիտեի շրջլիազորն անձնապես պարտավոր է բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի պարտավորությունները ժամանակին չկատարող կոլտնտեսություններից և մենատնտեսներից ժամանակից շուտ և լրիվ գանձվի ամբողջ տարեկան ապանի չկատարված մասն ու բոլոր անհրաժեշտ նյութերը ներկայացնի դատական մարմիններին՝ շտապ կարգով պատասխանատվության կանչելու այն մենատնտեսներին, վորոնք սաբոտաժի յեն յենթարկում պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության կատարումը:

7. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՐՊՈՎ ՀԱՅԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

48. Կոլտնտեսությունները կարող են իրենց համար սահմանված՝ պետությանը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության չափը, մթերումների կոմիտեների շրջլիազորի միջոցով բողոքարկել մթերումների կոմիտեի Հանրապետական լիազորին:

Վերջինս պարտավոր է կոլտնտեսության այդ գանգատը քննել և վճիռ կայացնել գանգատը ստանալուց 5 որվա ընթացքում և վճիռ մասին հայտնել գանգատավոր կոլտնտեսությանն, այլև այն շրջանի մթերումների կոմիտեի լիազորի և շրջգործկոմի նախագահին, վորտեղ գտնվում է գանգատավոր կոլտնտեսությունը. մթերումների կոմիտեի հանրապետական լիազորի վճիռները վերջնական են և հետագա բողոքարկման յենթակա չեն:

49. Մենատնտեսները կարող են իրենց համար սահմանված հացահատիկի պարտադիր հանձնման չափը բողոքարկել շրջգործ-

կոմի նախագահության, որը քննում է գանգատը 3 օրվա ընթացքում մթերումների կոմիտեի լիազորի մասնակցությամբ։

Շրջգործկոմների նախագահության այն վճիռները, որոնք համաձայնված են Մթերումների Կոմիտեի շրջլիազորի հետ, վերջնական են, հետագա բողոքարկման ենթակա չեն և հայտնվում են գանգատավորին և համապատասխան գյուղխորհրդին։

Շրջգործկոմի նախագահության և մթերումների կոմիտեի շրջլիազորի միջև տարաձայնություններ ծագելու դեպքում հարցը փոխադրվում է մթերման կոմիտեի Հանրապետական լիազորի քննությանը։

Վերջինի կայացրած վճիռը վերջնական է և հայտնվում է շրջգործկոմին ու մթերումների կոմիտեի շրջլիազորին, որոնք այդ վճռի մասին հաղորդում են գանգատավորին և համապատասխան գյուղխորհրդին։

50. Գանգատ տալու համար ժամկետ սահմանվում է ինչպես մենատնտեսների, նույնպես և կոլտնտեսությունների համար— 10 օր՝ պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորագիրը նրանց հանձնելու օրվանից հաշված։ Այդ ժամկետը լրանալուց հետո ոչ մի գանգատ՝ ոչ շրջգործկոմները, ոչ էլ մթերումների հանրապետական լիազորը քննության չեն առնելու։

ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեի

Հայաստանի լիազոր՝ Ն. ԿՈՒՐՍԵԼ

Гос. Публ. Библиотека ССР им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվ.

ՑՈՒՑԱԿ

ՀՍԽՀ հացահատիկի ընդունման կետերի 1933 թ.

№	Շրջաններ	Կետեր		
		Առաջին	Երկրորդ	
	ԶԱԳՈՏԶԵՐՆՈ			
1	Ստեփանավան	Ստեփանավան	—	
2	Ղարաքիլիսա	Ղարաքիլիսա	—	
3	Դիլիջան	Դիլիջան	—	
4	Աղբաբա	Ղըլ-Ղոչ	—	
5	Լենինական	Լենինական	Նալբանդ	
6	Արթիկ	Արթիկ	Ագին	
7	Թալին	Թալին	—	
8	Ղուրդուղուլի	Մարգարա	—	
9	Աշտարակ	Աշտարակ	—	
10	Աբարան	Բաշ-Աբարան	Հաջի-Խալիլ	
11	Քեշիշքենդ	Քեշիշքենդ	—	
12	Փաշալու	Փաշալու	—	
13	Սիսիան	Ղարաք.-Սիսիան	—	
14	Գորիս	Գորիս	—	
15	Կոտայք	Աքթամուս	—	
16	Ախտա	Ախտա	Ցելենդուկա	
17	Նոր-Բայազետ	Նոր-Բայազետ	—	
18	Մարտունի	Մարտունի	—	
19	Բասարգեչար	Զագալու	—	
	ԲԱՄԲԱԿ-ՄԹԵՐՔ			
1	Վաղարշապատ	Վաղարշապատ	—	
2	Ղամարլու	Ղամարլու	—	
3	Վեդի	Վեդի	—	
	ՍՊԱՌԿՈՈՊ			
1	Իջևան	Ուզունթալա	—	
2	Շամշադին	Բերդ	—	
3	Ղափան	Ղափան	—	
4	Ալլահվերդի	Ալլա Վ. կայար.	—	

ՀՀ Ազգային գրադարան
NL0238251

54 864

Պետհրատի տպարան Սրբագրիչ Հ. ՍԱՌԻՆՅԱՆ

Գլավլիտ 8416 (բ) Պատվեր 820 Տիրաժ 2000